

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐ

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Զեռագրաց Մատենադարանին մէջ թիւ 1432 Մանկութեան Աւետարանէն զատ կը զտնուին նաեւ ուրիշ երեք Մանկութեան Աւետարաններ (թիւ 3062, 3164 և 3364), որոնց համապատ նըկարագրութիւնը կը ներկայացնենք Սինէի ընթերցողներուն՝ զաղափար մը տալու համար այդ ձեռագիրներուն մասին:

Թիւ 3062 և 3364 Մանկութեան Աւետարաններուն սկզբնաւորութիւնները կը համապատասխանեն Վենետիկի 1898ի հրատարակութեան. իսկ թիւ 3164 Մանկութեան Աւետարանը սկիզբը մաս մը ունի որ կը պակսի միւս երեք Աւետարաններուն մէջ: Հետեւարար այս Աւետարանը առաւելութիւն ունի միւսներուն վրայ, քանի որ ուղղակի սկիզբէն կը սկսի. անոր գրչութիւնն ալ միւսներէն լաւ է: Գրութեան թուականն ու վայրը անյայտ են, որովհետեւ յիշատակարան չունի: Կը պարունակէ իթ զլուխներ: Սոյն Աւետարանը և թիւ 3062 Մանկութեան Աւետարանը (իթ զլուխներ) ունին նոյն վերջաւորութիւնը և կը համապատասխանեն Վենետիկի հան համապատասխան հրատարակութեան վերջաւորութեան:

Թիւ 3164 ձեռագիրն ալ իրականին մէջ ունի իթ զլուխներ, բայց արդագրին ժե զլուխը բաժնուած ըլլալով երկուքի, այսինքն ժե ժԶ զլուխներու, ասով մէկ զլուխ աւելցած եւ եղած է իթ: Թիւ 3164 Աւետարանին իթ զլուխը կը համապատասխանէ տպագրի իթ զլուխին:

Թիւ 3062 Մանկութեան Աւետարանը յիշատակարան ունի, հետեւարար Գրիչը, վայրը եւ զրութեան թուականը յայտնի են:

Թիւ 3364 ձեռագիրը կը բարկանայ երկու մասերէ: Առաջինը Մանկութեան Աւետարան մըն է, իէ զլուխներով, որուն սկզբնաւորութիւնը կը համապատասխանէ Վենետիկի հրատարակութեան և Սրբոց Յակոբեանց թիւ 3062 Մանկութեան Աւետարանին: Թերթինկած ըլլալուն պատճառաւ չենք զիտեր թէ ինչպէս կ'աւարտէր Մանկութեան Աւետարանը:

Երկրորդ մասը հաւաքածոյ մըն է, որ կցուած է Մանկութեան Աւետարանին, բայց զլուակարգութիւնը կը շարունակուի՝ իթ-իթ: Ունի երկու յիշատակարաններ, ուստի յայտնի են Գրիչը, ստացողը, վայրը և զրութեան թուականը: Հաւաքածոյին ալ նկարագրութիւնն ու բովանդակութիւնը կը ներկայացնենք ամփոփ կերպով:

ԹԻՒ 3062

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Զեռագրաց Մատենադարանին մէջ զտնուող թիւ 3062 Մանկութեան Աւետարանը «Մանկութիւն Յիսուսի» խորագրուած է Գրչին կողմէ:

Մաւալ $16 \times 11 \times 2.5$ սմ.: Էջք 242: Հանդամանք բաւարար, բայց կարգ մը տեղեր կարերը քակուած են եւ թերթերը փրթած: Թուղթ տոկուն: Գըրութիւն սեւ մելանով, բայց երբեմն սկզբնատառերը զրուած են կարմիր մելանով: Իսկ զլուխներուն վերնագիրները ամբողջութեամբ զրուած են կարմիր մելանով (2 զոյն) եւ յաճախ թունագիր սկզբնատառերով: Ձեռագիրը

միասիւն է : Թերթին երկու կողմերէն լուսանցքներ քաշուած են կարմիր մելանով , 20 տող , նոտրազիր մաքուր եւ ընթեռնլի : Համառօտազրութիւնք բաւական առատ : Ուզգազրութիւն լաւ : Գրիչ՝ Միքաք դպիր : Ժամանակ ԹձՇԲ : 1703 : Տեղ՝ Կոստանդինուպոլիս : Կաչեկաղմ խաւաքարտեայ ոսկեդրուագ , քայքայուած :

Բովանդակութիւն .—

Էջ 1-6 , դատարկ :

Էջ 7 , «Յանկ առ Յիսուսի մանկութեանն զեղեցիկ» : Առի իր դուխներ Վենետիկեամին ոյէս :

Էջ 9 , խորանազարդ եւ լուսանցազարդ :

Առաջին գլուխը կը սկսի Վենետիկեան 1898ի հրատարակութեան Համաձայն «Խոկ այրն Յովակիմ յորժամ ել ի տանէ խրմէ . . .» :

Էջ 17-18 դատարկ , բայց պակաս չկայ :

Էջ 19 շարունակութիւնն է Էջ 16ի :

Գլուխներուն բաժանումները կը համապատասխանեն Վենետիկեանին եւ զրեթէ վերնազիրներն ալ իրարու նման են : Օրինակ . Զեռազիր Ժէ գլուխ , Էջ 120 . «Վասն Հրեշտակին յայտնելոյ Յովակիմ՝ դնալ նոցա փախատական ի ձեռաց Հերովդէի յերկիրն յԵղիպտոս» . Տպ . Էջ 60 :

Զեռազիր Ժէ գլուխ , Էջ 108 . «Վասն քառասնօրեայ դալ ի Տաճարն բազում ընծայիր» . Տպ . Էջ 53 : Զեռազիրն Զ եւ ի գլուխները ևտեւ առաջութիւն մը ունին :

Զեռազիրը կը վերջանայ Վենետիկեանին ոյէս . «Եւ Յիսուս օրհնեաց զնոսա և նոքա զնացին խաղաղութեամբ զմանապարհո իւրեանց» . Չեռ . Էջ 240 :

Էջ 240 , Յիշատակարան Գրչի :

«Գրվեցաւ գիրքս ձեռամբ սուտանուն Միքաք դպրիս , որ է յերկրէն Ակնա ի գիւղէն Կամբրկապցի . եւ որ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով , միով հայր մեղայիւ յիշեցէք . եւ դուք եւս յիշեալ լիցիք ի Քրիստոսէ ամէնք» :

«Թվին ԹձՇԲ (1703) գրվեցաւ ի մայրաքաղաքն Կոստանդինու ոյօլիս» :

Էջ 241-242 , դատարկ :

Թիի 3164

Մանկութեան Աւետարանին սկիզբը անթերի ըլլալով , կը լրացնէ թիւ 1432 ձեռազրին պակասը :

Մաւալ $19 \times 15 \times 1.5$ սմ . : Էջք 132 : Հանդամանք բաւարար , բայց 1-28 եւ 115-132 էջերուն վերի մասերը փոսած են խոնաւութեան պատճառով . կը պակսի իէ գլուխին սոսաջին մասը՝ թերթ ինկած ըլլալով : Թուղթ հասարակ : Դրութիւն՝ խորագիրները եւ սկզբնատողերը կարմիր , մնացեալը սկ մերանով , երկախն , 28 տող , նոտրազիր մաքուր եւ ընթեռնլի : Համառօտազրութիւնք յոյժ առատ : Ուզգազրութիւն լաւ : Գրիչ՝ Ժամանակ եւ տեղ՝ անյայտ , վասնզի յիշատակարան չունի : Կաչեկազի անարուեստ :

Բովանդակութիւն .—

Էջ 1-2 , դատարկ՝ մասամբ պատռուած :

Էջ 3 , կարմիր մելանով «Յանկիս Մատենիս» . Ա-իթ գլուխներ :

կջ 5թ-6, դատարկչ անժաքուր:

կջ 7ա, նոտրադիր կարմրատառ:

«Պատմութիւն յաղաց մարդեղութեան մարմնացելոյն ի Սրբոյ Կուսէն, զոր Յակուրայ եղրօր Տեառն ասացեալ, որ ի սկզբանէ ականատես եղեւ Բանին (յ)Աստուծոյ. սկիզբն արարեալ կարգաւ գրել փոքր ի շատէ զյիշատակսն, որ եղէ ի ժամանակին յայնմիկ մի ըստ միոցէ: Օգնեա ինձ Քրիստոս»:

«Վասն Յովակիմայ եւ Աննայի կնոջ իւրում ամլութեան եւ յուրեան, որ շնորհեցաւ նմա յԱստուծոյ զաւակ օրինութեան Սուրբ Խոյսն Մարիամ»: — [Եւ Ե]զեւ [յառաջին ամի թագաւորութեան?] Օգոստոս Կայսեր Հոօմայցւոց աշխարհին, եւ ի թագաւորութեան Հերովդիայ արքայի Հրէաստանի Երուսաղէմացւոց, եւ յաւուր քահանայութեան Եղիպարու Ղեւացւոյ որդւոյ Սեղեկիայ քահանայի, էր ոմն այր մեծատուն յոյժ ի քաղաքին Նազարէթ՝ որոյ անունն էր Յովակիմ, եւ կնոջ իւրում՝ Աննա. եւ էին երկոքեան սոքասուրը եւ անարատ հոգւոյ առաջի Աստուծոյ, եւ ամենայն ժողովը ըստ Եանն, եւ հանապազ զինչս եւ ստացուածս իւրեանց բաշխէին աղքատաց եւ կարօտելոց, եւ ունէին բաղում հօտս ոչխարաց եւ անասնոց եւ այլ ամենայն չորքոստաննեաց:

Եւ ի գլուխ ամենայն տօնից մատուցանէր Յովակիմ նուերս եւ ընծայս Աստուծոյ, քահանայիցն, եւ ամենայն ժողովրեանն եւ հայցէր ի Տեառնէ ցաւագին անձամբ՝ տալ նմա զաւակ օրհնութեան, եւ յետ մահուանն բարի յիշատակ ունել յաղս իւր. եւ ակն ունէր հանապազ ողորմութեան Աստուծոյ, զի կին իւր ամուլ էր եւ ոչ գոյր նորա որդի՝ ունել զժառանզութիւնս իւրեանց:

Եւ եղեւ յաւուր միում մերձենալ տօնի՝ մեծի նուակատեացն որ Երուսաղէմ. . . .: — Տարունակութիւնը համեմատելի է թիւ 1432 ձեռագրին հետ: Տես «Մայր Յուցակ Զեռագրաց Սրբոց Յակուրեանց», Ե Հատոր, 1971, էջ 103:

Այս ձեռագրին զլուխներուն բաժանուամներն ալ շատ մը տեղեր կը համապատասխանեն Վենետիկեանին, բայց վերնագիրները ընդհանրապէս աւելի երկար են: Օրինակ. Զեռաղիր, Ժ գլուխ, էջ 49. «Վասն իրեշտակին զոշելով հովիւսն զաւետար բարբառն՝ եւ յայրն փուրով հասանել նոցա բազում ընծայիւք երկրպագութիւն տեսանելով զծնունդն Սուրբ»: Տպագիր՝ Ժ գլուխ, էջ 41 ունի միայն «Վասն հովուացն՝ որ տեսին զծնունդ Տեառն մերոյց»: Զեռաղիր, զլուխ իթ, էջ 125. «Վասն շիզուցանելոյ գրարկութիւն երկուց քարասիրտ զինուորաց՝ եւ քարզելն առաջի նոցա հեզարեամբ. և յարուցանելն զնոսա շիքան զբարուցն իւրեանց»: Տպագիր՝ իթ գլուխ, էջ 122, ունի միայն «Վասն զաւառութեան զոր առնէր ի մէջ երկու զինուորաց»:

Այս ձեռագրին ալ կը վերջանայ Վենետիկեանին վերջացած տեղը, այսպէս. «Եւ Յեսուս օրհնեաց զնոսա եւ զնացին խաղաղութեամբ ի ձանապարհու իւրեանց եւ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն»:

Վերջ՝ էջ 129ա: Յաջորդ սիւնակը, ինչպէս նաեւ էջ 130-132 համարեա դատարկ:

Թիի 3364

«Ժողովածոյ» մըն է, որուն առաջին մասը Մանկութեան Աւետարան, իսկ երկրորդը՝ կը պարունակէ այլապան գրութիւններ:

Ծաւալ $15 \times 10 \times 4$ սմ.: էջք 514: Պրակարթիւերը անկանոն են. առաջին

ժամաբ վերջ կը գտնէ էջ 332 (Ա—ՁԲ), յետոյ կը սկսի նոր պրակաթիւք (Ա—Ը): Հանգամանք՝ զբեթէ բաւարար: էջ 21—22, 47—50, 71—72, 98—113, 497—498 թերթեր քակուած են: էջ 50—51ի մէջեւ թերթ ինկած է: Ետեւ առաջութիւն թերթեր քակուած են: Թուղթ հասարակ: Գրութիւն խորագիրները և կայ Զ և կ գլուխներու միջեւ: Թուղթ հասարակ: Գրութիւն խորագիրները և սկզբնատառերը կարմիր եւ յաճախ թռչնագիր եւ գարդագիր, մնացեալը սեւ մէլանով, միասիւն: էջ 1—286 18 տող: էջ 287—509 18-20 տող, նորագիր: էջ 98—113 անմաքուր, իսկ մնացեալը ընդհանրապէս մաքուր եւ ընթեռնի: Համառօտազրութիւնք առատ: Ուղղագրութիւն զբեթէ զոհացուցիչ: Գրիշ և ստացող Տիրացու Յուսէփ: Ժամանակ Ռձիկ = 1678, վայր անյայտ, որովհետեւ յիշատակարանին մէջ չի յիշուիր (էջ 306): Ժողովածոյին Երկրորդ մասին դրութեան թուականն է Ռձիկ = 1681: Գրիշ եւ ստացող դարձեալ Տիրացու Յուսէփ, էջ 510: Տեղը անյայտ: Կաշեկազմ անարուեստ, մասսմբ քայլքայլուած:

Յովանդակուրիւն Առաջին մասի.

Էջ 1-266 Մանկութեան Աւետարան՝ բաղկացած Ա—Իի գլուխներէ:

Սկզբնաւորութիւնը կը համաձայնի Վենետիկեան 1898ի Հրատարակութեան եւ Սրբոց Յակոբեանց թիւ 3062 ձեռագրին: «Իսկ այլ նորա Յովակիմ յորժամ եւ ի տանէ իւրմէ . . .»:

Ձեռագրին մէջ յայտնի է որ էջ 286էն Ետք թերթ ինկած է: Հետեւարար չենք գիտեր թէ ինչպէ՞ս կ'աւարտէր Աւետարանը: Ձեռագրին մերջաւորութիւնը «Ասէ Յիսուս. Մեր մի բարկանայր, այլ» էջ 286, կը հասնի տըպագրի իի գլուխին մէջ «Ասէ Յիսուս. Մեր, մի՛ բարկանայր, այլ . . .» էջ 120:

Աւետարանին գլուխներուն բաժանումները յաճախ կը համապատասխանին Վենետիկի Հրատարակութեան, բայց կարգ մը տեղեր գլուխները վերնագիր չունին: Եղած վերնագիրներն ալ մասսմբ կը տարբերին տպագրեալէն: Օրինակ. Ձեռագրի Ժ, էջ 85-86. «Ճամսեր(ր)որդ գլուխ պատմութիւն վասն Հով[ու]ացն որ պահէին զհօսս խաշանց եւ այժմ հրեշտակ Աստուծոյ ետ զաւատի ծնրնդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: Տպագրի Ժ գլուխը, էջ 41, ունի միայն «Վասն Հով[ու]ացն որ տեսին զծնունդ Տեառն մերոյ»:

Ձեռագիր, գլուխ ԺԲ, էջ 116. «Վասն ծնրնդեան քոյ Քրիստոս Յիսուս ողորմեա բատացողիս Տիրացու Աւսէփին»: Իսկ տպագրի ԺԲ գլուխը ունի «Վասն քառասորեայ գնալոյն ի տաճարն բաղում ընծայիւք»:

Ձեռագիր, գլուխ ԻԲ, էջ 236. «Եւ յայժմ սկսանիմք պատմել դգնալն Յիսուսի ի քաղաքն Արեմաթեայ Եթէ որպէս արար սքանչելիս ի քաղաքին յայն»: Իսկ տպագրի ԻԲ գլուխը, էջ 100, ունի «Վասն գնալոյ նորա յԱրեմաթեայ քաղաք, զողայութիւնն զոր առնէր Յիսուս մահու և Յարութեան»:

Յովանդակուրիւն Երկրորդ մասի.

ԻԲ, էջ 287. «Վկայաբանութիւն կամաւոր աղքատին»:

ԻԲ, էջ 306, առանց վերնագրի. «Սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն Հայոց Խ [քառասուն] տիւ եւ զի [զքառասուն] զիշեր հաց ոչ եկեր եւ ջուր ոչ արր . . .»:

Էջ 325-328, անվերնագիր. «Աստուծածին մայր Քրիստոսի»:

Էջ 329-330, տաղ «Ով զարմանալի»:

Էջ 330-331, Տաղ Յարութեանն:

Էջ 332, դատարկ:

Լ, էջ 333. «Յովհաննէս Մկրտչի այս է: Պատմութիւն Յովհաննու»:

Ա. էջ 341. «Այս է պատմութիւն Սրբոյն Ստեփանոսի նախավկային» :

Ա. էջ 347. «Տեսիլք Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսառըշի, Հարցմունք եւ պատասխանիք հրեշտակապետի, վասն հոգոցն արդարոց եւ մեղաւորացն» :

Ա. էջ 364. «Տեսիլք Սրբը Աստուածածնին ի Լեռոն Զիթենեաց, զոր յայտնեաց նմայ հրեշտակապետն վասն մեղաւորաց թէ որպէս տանջին» :

Ա. էջ 388. «Քարող վասն ննջեցելոց, Գրիգորի Տաթեւաց[ւ]ոյն ասացեալ ի բերանոյ Յորայ». Այսպէս ասէ երանելին Յոր :

Ա. էջ 397-398. «Քարող վասն ողորմութեան ի բանից սաղմոսին եւ որպէս ասէ Դաւիթ Մարգարէ» :

Ա. էջ 409. «Այս է պատմութիւն նախառատեղծին Աղամայ». Քանդի յորժամ :

Ա. էջ 424. «Վասն Յարութեան Գրիստոսի» :

Ա. էջ 432. Պարձեալ «Վասն Յարութեան Գրիստոսի» :

Ա. էջ 438. «Քարող վասն Կղէոպաս որ են ճանապարհի, եւ Քարող վասն Թումայի» :

Ա. էջ 450. «Քարող վասն ազօթից» :

Ա. էջ 462. «Քարող վասն Նինուէացւոցն» :

Ա. էջ 477. «Պատմութիւն ի Հարանց վարուցն» :

Ա. էջ 482. «Այլ Քարող որ ասէ Պատրաստ կացէք ի կնոջէ պոռնկէ» :

Ա. էջ 489. «Քարող վասն Գալստեանն Բրիստոսի եւ Պատաստանի նորայ» :

Ա. էջ 495. Պարձեալ «Վասն Գալստեան Բրիստոսի» :

Յիշտակաբնիք Գրչի.

1. էջ 306. «Գրեցի պատմութիւն ի թվին Հայոց Ռծիկ (1678) ի Նոյեմբեր ամսոյն իր (22) աւրն Ուրբաթ ի վայելումն Տիրացու Յուսէփին : Աւտեսեանս ամէն : Հայր մեր» :

2. էջ 510. «Գրեցաւ պատմագիրս ի թվին Հայոց Ռծկ (1681) ի Փետրվար ամսոյն իր (22) օրն Դշրթի» :

Էջ 511-514, մասամբ Պատարկ, Պրէափորձ, Եւայն :

ՍիֆԱՆ ՎՐԴ. ՄԿՍԵԱՆ